ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 սեպտեմբերի 2023 թվականի N 334 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 12.09.2023 թվականի գրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական չափը, լրավճարների չափաքանակները, վճարման պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 14-ի N 15-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 130-Ա որոշման հավելվածի աղյուսակում 1-ին կետի երրորդ սյունակի «912000» թիվը փոխարինել «565000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 13
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290